

ԻՆՉ ԵՄ ԱՆԵԼՈՒ, ԵՐԲ ԻՄ ՍԻՐԵԼԻՆ ՀԱՅՏՆՎԻ ՀՈՍՊԻՍՈՒՄ

Լուրջ հիվանդություն ունեցող սիրելի մասին հոգ տանելը ամենակարևոր գործն է, որ կարող եք անել: Մինչ Ձեր սիրելին գտնվում է հոսպիսային խնամքի ներքո, Ձեր՝ որպես առաջնային խնամողի գործողությունների շրջանակը կարող է ներառել մթերային գնումներ կատարելուց և ուտեստներ պատրաստելուց մինչև բժշկական այցելություններ կազմակերպելը և անմիջական օգնություն ցուցաբերելը, օրինակ՝ լողացնելը և անկողնային սպիտակեղենը փոխելը:

ԻՆՉՈ՞Վ Ե ՀՈՍՊԻՍԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԻՄ ՍԻՐԵԼԻՆ ԵՎ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

- Հարմարավետությունը պահպանելու համար անհրաժեշտ դեղամիջոցներ
- Բժշկական սարքավորումներ և պարագաներ
- Կարճաժամկետ ստացիոնար խնամք հավանության արժանացած հաստատություններում այն ախտանիշների համար, որոնք հնարավոր չէ վերահսկել տանը
- Տևից հեռու ժամանակավոր խնամքի ապահովում, որը կոչվում է նաև խնամողի կարճատև դադար (respite care):
- Կարող են հասանելի լինել նաև այլ անվճար ծառայություններ, օրինակ՝ կամավորություն, երաժշտական թերապիա, մերսում և բուժում ընտանի կենդանիների հետ:

ՁԵՐ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է:

Միանգամայն բնական է խնամքի պարտականությունների արդյունքում մեկուսացված և ծանրաբեռնված զգալը: Դուք կարող եք անվստահ զգալ խնամողի պարտականություններով պայմանավորված որոշումներ կայացնելու հարցում: Դուք կարող եք կասկածներ ունենալ սիրելի մասին հոգ տանելու Ձեր ունակության առնչությամբ:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Ե ՕԳՆԵԼ ՀՈՍՊԻՍԸ

Հոսպիսի խնամքով զբաղվող մասնագետները կարող են ցույց տալ, թե ինչպես կատարել այս կարևոր առաջադրանքների մեծ մասը: Դուք կունենաք թիմ, որը ներառում է բուժքույր, բժիշկ, սոցիալական աշխատող, տնային առողջության օգնականներ և հոգևոր խնամակալություն, որոնք կօգնեն Ձեզ հաղթահարելու խնամքով պայմանավորված ֆիզիկական պարտականությունները և կցուցաբերեն հուզական աջակցություն: Անհրաժեշտության դեպքում Դուք կարող եք դիմել Ձեր հոսպիսի թիմին:

Հոսպիսը կարող է նաև օգնել Ձեզ մշակելու ծրագիր՝ Ձեր սեփական կարիքները հոգալու և այլ ռեսուրսներ գտնելու համար: Ընտանիքին, ընկերներին, Ձեր եկեղեցուն կամ Ձեր սոցիալական խմբերին դիմելը նույնպես կարող է շատ օգտակար լինել:

ՈՒՐԻՇ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՍ

Ձեր սիրելիին հոսպիս ընդգրկելը կամընտիր է: Հոսպիսային խնամքը ցանկացած պահի կարող է չեղարկվել կամ փոփոխվել ցանկացած պատճառով:

Հոսպիսի մասին խոսեք Ձեր ընտանիքի և ընկերների հետ: Այս բրոշյուրի տարածումը կարող է օգնել Ձեզ սկսել զրույցը: Դուք կարող եք խնդրել տեղեկատվական նպատակներով հոսպիս այցելություն, որը կարող է օգնել Ձեզ ընտրություն կատարել հոսպիսների միջև:

Տեղեկատվություն փնտրեք Ձեր շրջանում գտնվող հոսպիսների մասին:

Արդյո՞ք ՀՈՍՊԻՍԸ ճիշտ որոշում է ԻՄ ՍԻՐԵԼԻՆ և ինձ համար





ԻՆՉ Ե ԶՈՍԴԻՍԸ

Հոսպիսը խնամք, հարմարավետություն և աջակցություն է տրամադրում անձին, ով տառապում է լուրջ հիվանդությամբ:

ԻՆՉԴԵՐՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԻՄԱՆԱԿԸ, ՈՐ ՀՈՍԴԻՍԸ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Է

Երբեմն քիմիոթերապիան և ճառագայթային թերապիան այլևս չեն կարող բուժել քաղցկեղը: Հոսպիսի խնամքի նպատակն է օգնել Ձեր սիրելիին հասնելու կյանքի հնարավոր լավագույն որակին իր կյանքի վերջին ամիսներին, շաբաթներին և օրերին:

Հոսպիսի մասնագետները վերահսկում են այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, սրտխառնոցը և շնչափնտրությունը: Դրանք կարող են օգնել նվազեցնել անհանգստությունը և առաջարկել հոգևոր և հուզական աջակցություն: Ուշադրության առանցքում է օգնելու Ձեր սիրելիին ավելի երկար ապրել՝ հարմարավետ և արժանապատիվ կերպով:

Հոսպիս չի նշանակում հույսը կտրել:
Հոսպիսում գտնվելու ընթացքում Ձեր սիրելին կշարունակի ստանալ ամենաբարձր որակի բժշկական օգնություն:

ԵՐԲ ՊԵՏՔ Ե ԽՈՍԵՄ ԻՄ ՍԻՐԵԼԻԻ ՀԵՏ ՀՈՍԴԻՍԻ ՄԱՍԻՆ

Գիտակցելը, որ պետք է որոշում կայացնել սիրելիի համար, ով ծանր հիվանդ է, կարող է դժվար լինել:

Բնական է սուր զգացողություններ և վախեր ունենալ ապագայի նկատմամբ: Որոշում կայացնելը կարող է դժվար լինել, բայց Ձեր սիրելիի հետ այս հարցերը քննարկելը կարող է օգնել Ձեզ սկսել զրույցը

- Ինչպե՞ս ես ուզում անցկացնել ՔՎ վերջին օրերը:
- Ո՞ւմ հետ կցանկանայիր ժամանակ անցկացնել:
- Ի՞նչ նպատակներ ունես:
- Արդյո՞ք հոսպիսի խնամքը տարբերակ է, որը կցանկանայիր քննարկել:
- Ի՞նչ է քեզ համար հոսպիսում մնալը:

ԻՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱԿ ԻՄ ՍԻՐԵԼԻԻ ՀԵՏ, ԵԹԵ ՆՐԱՆ ԸՆԴՈՒՆԵՆ ՀՈՍԴԻՍ

Հոսպիսում գտնվելու ընթացքում Ձեր սիրելին.

- Կշարունակի բժշկական օգնություն ստանալ այլ առկա հիվանդությունների համար, ինչպիսին է շաբաթախտը:
- Անհրաժեշտության դեպքում կշարունակի ստանալ ցավագրկողներ, հակաբիոտիկներ և այլ դեղամիջոցներ:
- Կկարողանա կապ պահպանել իր ուռուցքաբանի և բուժող բժշկի հետ:
- Կստանա հուզական, հոգեբանական և հոգևոր աջակցություն:

ՈՐՏԵՂ Ե ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ՀՈՍԴԻՍԸ

Խնամքը կտրամադրվի անտեղ, որտեղ Դուք ապրում եք (օրինակ՝ տանը, ընկերոջ տանը, մասնագիտացված խնամքի հաստատությունում, ծերանոցում, մեծահասակների խնամքի տանը, հոսպիսային կենտրոնում): Աջակցության համար Դուք կարող եք զանգահարել հոսպիս 24 ժամ շարունակ, շաբաթական 7 օր ռեժիմով:

